

քարոզիչ եւ մեկնիչ Ս. Գրոց, դիւրուսոյց պարզամտաց: Յովհաննէս ստէպ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ կ'երթար քարոզի, որով ծանօթացաւ եւ բարեկամացաւ Սարգսի: 1766ին գարնան խնդրեց Սարգսէն, որ զինք իբրեւ աշակերտ քոյն առնու: Ամիս մ'ետքը՝ Միջագիւղ Սարգսի բնակարանն հաստատուեցաւ՝ միջնորդութեամբ Պետանեան վարդապետի: Հոն երեք տարի աշակերտեւէն ետեւ, հաւանութեամբ Գրիգոր Պատրիարքին՝ Սարգիս զԅովհաննէս քահանայ ձեռնադրեց 3 Ապր. 1769ին ի տօնի «Մուտն ի Վիրապն», եւ նոյն օրը կրօնաւոր կամ արեղայ ըրաւ տալով «Վեղար՝ փիլոն ապայ»: Այս ձեռնադրութեան ժամանակ բոլոր աղգին առջեւ չորիշատակուեցան ծանօթ նշովքները, եւ անընդունելիները (Տաթեւացի եւն): Ըստ սովորութեան՝ երեք ամիս ետքը հրաման տուաւ Սարգիս, որ Նուրտինեան քարոզէ:

Յովհ. Վ. Նուրտինեան 1772ին Սարգսին հետ Խտալիա գնաց, Սարգսի մահուանէն ետեւ Լիվոռնոյ հաստատուեցաւ, 1789ին անոր կենսագրութիւնը գրեց, ինչպէս նաեւ անոր տապանագիրը: Ունի ոտանաւոր նամակ մը (Դիւ. Անտ.), գրած 3 Մայիս 1790, առ Ստեփ. Վ. Աթթանտիլեան, Եպ. Ախալցխայի, Ձեռնագրիչ ի Հռոմ (1785—1795), որով կը ծանուցանէ, թէ Զուղայեցի Խոճամալ Սաֆար մեծահարուստը շնորհաստանէն Լիվոռնոյ եկած է, եւ Նուրտինեանի հետ կրօնական վէճեր ընելէն ետեւ՝ համոզմամբ կաթողիկէ հաւատքն ընդունած է: